



2017 թվականի հուլիսի 4-ին, Ջավախք կատարած ճանաչողական այցի շրջանակներում ԱՄՆ-ի Կալիֆորնիա նահանգի Գլենդել քաղաքի քաղաքային խորհրդի անդամ Ջարեհ Սինանյանը և գեներալ Արշալույս Փայտյանը ժամանեցին Ախալքալաք: Տեղի Սուրբ Խաչ եկեղեցում բարձրաստիճան հյուրերին դիմավորեցին Սամցխե-Ջավախքի և Ծալկայի ընդհանուր առաջնորդական փոխանորդ Հոգեշնորհ Տեր Բաբգեն վարդապետ Սալբիյանը հոգևոր դասը և «Վաչիան» ազգագրական պարերի համույթը՝ ավանդական աղ ու հացով: Հյուրերը ծաղիկներ խոնարհեցին Սուրբ Խաչ եկեղեցու բակում տեղադրված, Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակի խաչքարին, ապա մոմեր վառեցին և իրենց աղոթքը շարունակեցին եկեղեցում, որտեղ Հոգեշնորհ Հայր Սուրբը ներկայացրեց եկեղեցու ու Սամցխե-Ջավախքի ընդհանուր առաջնորդական փոխանորդության գործունեությունը, եկեղեցու պատմությունը, իր օրհնությունը բերեց հյուրերին՝ նվիրելով հիշատակի սրբապատկերներ:

Ախալքալաքում Ջարեհ Սինանյանը Գլենդելի քաղաքային խորհրդի անունից պատվոգիր հանձնեց Սամվել Պետրոսյանին:

Հյուրերն այցելեցին Ախալքալաքի վրացական եկեղեցի, ծաղիկներ խոնարհեցին ապրիլի 9-ի զոհերի հուշակոթողին, եղան նաև Զիվանու տուն-թանգարանում:

ԱՄՆ-ի Գլենդել քաղաքի քաղաքային խորհրդի անդամ Ջարեհ Սինանյանի խոսքերով՝ այցը զուտ ճանաչողական բնույթի է և նպատակն է ծանոթանալ համայնքի խնդիրներին:

«Ախալցխայի դեպքում՝ ծանոթանալ տեղի իշխանությունների հետ, հասկանալ թե իրենք ինչ խնդիրներ ունեն, ինչ հարաբերություններ գոյություն ունեն իշխանության և համայնքի միջև, և դրանում ինչ դեր կարող է ունենալ Հարավային Կալիֆորնիայի համայնքը: Ինձ մոտ այն տպավորությունն է, որ Ախալցխայի հայերն ավելի են ինտեգրված վրաց հասարակությանը», - ասաց Ջարեհ Սինանյանը:

Ըստ նրա՝ խնդիրները, ինչպես ամենուր, սոցիալական բնույթի են, կան որոշակի լուրջ հարցեր՝ կապված դպրոցական կրթության հետ, օրինակ այն, որ մի դպրոցում 80-ականներին սովորել է 1200 աշակերտ, հիմա նույն դպրոցում միայն 100 աշակերտ է։ Սա է ամենամտահոգիչը», – նշեց Գլենդելի քաղաքային խորհրդի անդամը սակայն ամենացավալին դա արտահոսքի՝ օր-օրի աճող թվերն է։ Բարձրաստիճան հյուրը մտահոգություն հայտնեց նաև Ախալքալաքում ճանապարհների վիճակի մասին։ «Ես կուզենայի, որ Սփյուռքը, ինչպես վերաբերվում է Հայաստանին ու Արցախին, նույն ձևի էլ Ջավախքին սրտացավ մոտեցում ցուցաբերի։ Ես դեռ չգիտեմ կոնկրետ մենք ինչ կարող ենք անել, բայց կաշխատենք անպայման», – ասաց Ջարեհ Սինանյանը։

Համշենից, ԱՄՆ-ից ու Հայաստանից հյուրերի ժամանման գաղափարը պատկանում է Արցախյան ազատամարտիկ, ծնունդով Խնուսիցի Էդուարդ Էնֆիաջյանին, որը ներկայումս բնակվում է ԱՄՆ-ի Լոս Անջելես քաղաքում:



0000000 00000000